

Եվրոպական հարևանության շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգին (ՇՄՄՏՀ) ընդառաջ

ԵՀԲԳ-ՇՄՄՏՀ ծրագիր

Կառուցենք Սևանա լճի ՇՄՄՏՀ, Հայաստան

Ջրային ռեսուրսների ցուցանիշներ





2010թ-ից Եվրոպական Միությունը տարածաշրջանային համագործակցության մեջ ներգրավել է Արևելյան Համագործակցության երկրները (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա)՝ բնապահպանական միասնական տվյալների ու տեղեկատվության կառավարման ու փոխանակման ազգային կարողությունները բարելավելու նպատակով: Այս համագործակցությունը ֆինանսավորվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից և իրականացվում է Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության կողմից՝ «Եվրոպական հարևանության շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգին ընդառաջ» (ԵՀԲԳ-ՇՄՄՏՀ) ծրագրի շրջանակներում:

Շրջակա միջավայրի Միասնական Տեղեկատվական համակարգ կառուցելու առանցքային խնդիրը միասնական տվյալների ու տեղեկատվության փոխանակման և օգտագործման միջոցով բնապահպանական հաշվետվողականության և գնահատման կանոնավոր գործընթացի ստեղծումն է՝

բնապահպանական քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար: ՇՄՄՏՀ-ի իրականացումն օգնում է ճիշտ միջոցներ ձեռնարկել երեք հիմնական ուղղություններով:

- **Համագործակցություն՝** տվյալներ ու տեղեկատվություն ապահովողների և օգտագործողների միջև գործընկերության ստեղծում
- **Ընդհանուր բովանդակություն՝** քաղաքականապես նշանակալից և համադրելի տեղեկատվության ստեղծում
- **Ընդհանուր ենթակառուցվածք՝** ընդհանուր և արդի համացանցային տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում

Որպես ԵՀԲԳ-ՇՄՄՏՀ-ի մաս, 2014թ-ին Հայաստանում նախաձեռնվել է Սևանա լճի ավազանի վերաբերյալ հիմնական տվյալներ տրամադրողների և տնօրինողների միջև տվյալների կայուն և շարունակական փոխանակման մեխանիզմի մշակման պիլոտային ծրագիր:



Սևանա լիճը և ՇՄՄՏՀ-ի կարևորությունը



Որպես Հարավային Կովկասում ամենամեծ և Եվրասիայի բարձրալեռնային քաղցրահամ լճերից մեկը, Սևանա լիճը հայկական բնական և մշակութային գոհար է: Ի թիվս իր բազմաթիվ հատկանիշների Սևանա լիճը՝

- քաղցրահամ ջրի և ձկնատեսակների առավել կարևոր աղբյուր է հանդիսանում Անդրկովկասյան տարածաշրջանում
- էական ներդրում ունի Հայաստանի տնտեսության մեջ
- ապահովում է Արարատյան դաշտավայրի վարելահողերի ոռոգումը
- ապահովում է հիդրոէլեկտրաէներգիայի արտադրություն, ռեկրեացիա և զբոսաշրջություն
- ապահովում է հարուստ կենսաբանական բազմազանություն և ֆլորայի ու ֆաունայի էնդեմիկ տեսակների հարաբերականորեն բարձր տոկոս:



Գտնվելու վայրը

- Գեղարքունիքի մարզ, Հայաստան

Հիմնական ներհուսքերը

- 28 գետեր և գետակներ

Առաջնային արտահոսքերը

- Գոլորշիացում (90%)
- Հրազդան գետ

Առավելագույն երկարությունը
• 78կմ (2005)

Առավելագույն լայնությունը
• 56կմ (2005)

Լճի հայելու մակերեսը
• 1245 կմ² (2014)
• 1236կմ² (2002)
• 1416կմ² (1933)

Ջրի ծավալը
• 37,7կմ³ (2014)
• 58,5կմ³ (1933)

Նախորդ դարի ընթացքում Սևանա լճի ջրի մակարդակը և հայելու մակերեսը էականորեն փոխվել են: Ի պատասխան լճի մակարդակի պատմական նվազումների Հայաստանը ձեռնարկել է բնապահպանական և տեխնիկական միջոցներ, որպեսզի ապահովի ջրային ռեժիմի օպտիմալ պահպանումը:

Սևանա լճի Էկոհամակարգը դեռևս ենթարկվում է այնպիսիսի ճնշումների, ինչպիսիք են.

- հիդրոէլեկտրաէներգիայի և ոռոգման նպատակներով լճից ջրի բացթողումները;
- ավազանային գետերի վրա փոքր ՀԷԿ-երի կառուցումը;
- գյուղատնտեսություն և խոշոր եղջերավոր անասունների բուծումը;
- չմաքրված կենցաղային կեղտաջրերի արտահոսքը դեպի լիճ;
- ջրածածկ անտառների քայքայումն ու լճի մեջ կենսածին տարրերի հոսքը;
- ավազանում հանքարդյունաբերությանը զբաղվելը;

- արտադրության և սպառման թափոններով աղտոտումը:

Այժմ, կլիմայական փոփոխություններն ավելի մեծ ճնշում են առաջացնում: Լիճ թափվող բազմաթիվ գետերի և գետակների հոսքի կրճատումը և օդի ջերմաստիճանի բարձրացումը կարող են նպաստել լճի ջրի որակի վատթարացմանը:

Սևանալ լճի վիճակի վերաբերյալ համապատասխան և ճիշտ ժամանակին տրված բնապահպանական տեղեկատվությունը ղեկավարներին օգնում է դիտարկել փոփոխություններն ու միտումները, որոնք էլ նպաստում են պատշաճ կառավարման ու որոշումների կայացմանը:

Սևանա լճի ավազանի համար հաստատված ՇՄՄՏՀ պորտալը բնապահպանական ցուցանիշների հավաքագրման, ներկայացման և տարածման համար հանդիսանում է արդյունավետ գործիք:

Սևանա լճի համար ՇՄՄՏՀ ջրային ցուցանիշներ




1. Հիդրոոդերևութաբանություն և քաղցրահամ ջրի վերականգնվող պաշարներ
 - Ջերմաստիճան
 - Տեղումներ
 - Գոլորշիացում
2. Վերականգնվող ջրային պաշարներ
 - Մակերևութային և ստորգետնյա ջրերի ներհոսք և արտահոսք
 - Սևանա լճի ջրային հաշվեկշիռ
3. Քաղցրահամ ջրերի ջրառ
 - Նույն ըստ ջրառի նպատակների, մարզերի, ՏԳՏԴ, ջրավազանային կառավարման տարածքի
4. Ջրօգտագործում
 - Նույն ըստ ջրօգտագործման նպատակների, մարզերի, ՏԳՏԴ, ջրավազանային կառավարման տարածքի
5. Կենցաղային ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով
6. Կենտրոնացված ջրամատակարարում
7. Բնակչությանը կենտրոնացված ջրամատակարարման հասանելիությունը
8. Ջրի կորուստները
 - Նույն ըստ ջրամատակարարման նպատակների, մարզերի, ՏԳՏԴ, ջրավազանային կառավարման տարածքի
9. Ջրի կրկնակի և շրջադարձային օգտագործում
10. Խմելու ջրի որակ
11. ԹԿՊ և ամոնիակային ազոտի պարունակությունը գետերի ջրերում
12. Կենսածին տարրերի պարունակությունը քաղցրահամ ջրերում
13. Լճի ջրում և հատակային նստվածքներում աղտոտիչ նյութերի պարունակություն
14. Կեղտաջրերի մաքրման համակարգում ներառված բնակչություն
15. Կեղտաջրերի մաքրման կայաններ
16. Չմաքրված կեղտաջրեր
 - Նույն ըստ հոսքաջրերի կատեգորիայի, մարզերի, ՏԳՏԴ, ջրավազանային կառավարման տարածքի:

Համագործակցությունը Հայաստանում

Կառավարական տարբեր կազմակերպություններ հավաքում և պահում են բնապահպանական տեղեկատվությունը, աջակցում են պորտալի բովանդակությանը և նշված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հաշվետվությամբ տրամադրում են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը: Վիճակագրական ծառայությունը ստեղծում է կայքը և պորտալը՝ Սևանա

լճի համար ընտրված բնապահպանական ցուցանիշների տվյալների հավաքմամբ, թարմացմամբ և ներկայացմամբ: Բնապահպանության նախարարությունը տրամադրում է համապատասխան տեղեկատվություն, վերլուծական աջակցություն: Տվյալների իրավատերերը պատասխանատու են տրամադրվող տվյալների որակի հսկողության համար:









Սևանա լճի պորտալը ներկայացնում է ընդհանուր ենթակառուցվածք, որը հնարավորություն է տալիս տվյալներ արտադրող հիմնական կազմակերպություններին փոխանակել և թարմացնել Սևանա լճին վերաբերող բնապահպանական տեղեկատվությունը: Առանձին հասանելիության մակարդակը թույլ է տալիս լայն հանրությանը տեսնել և օգտագործել նույն տեղեկատվությունը: Ի վերջո պորտալը կապահովվի՝

- գրանցված 16 ջրային ցուցանիշների սահմանումները
- վիզուալ, տեքստային և վիճակագրական նյութեր
- ինտերնետային հղումներ դեպի հաշվետու կազմակերպություններ
- ինտերնետային հղումներ դեպի ազգային օրենսդրություն և միջազգային պայմանագրեր

Սևանա լճի ՇՄՏՏՀ-ի օգտագործողները կարող են ընտրել հետևյալ տեղեկատվությունը բացվող ցուցակից. ցուցանիշ, ենթացուցանիշ, ջրային օբյեկտի տեսակ (զետ, լիճ, ջրամբար),

Սևանա լճի պորտալը հասանելի է

www.seis-sevan.am հասցեով հայերեն և անգլերեն լեզուներով:



Նայելով դեպի ապագա



Սևանա լճի պիլոտային ծրագրի իրականացումը տեղին է և համաժամանակ Սևանա լճի բնապահպանական տվյալների օպտիմալացմանն ուղղված հայկական ազգային ծրագրերին և 2014թ.-ի Հայաստանի կառավարության համապատասխան որոշմանը: Սևանա լճի ՇՄՍՏՀ-ի ընդլայնումը ի վերջո կարող է ներառել տվյալների և ցուցանիշների լրացումներ այնպիսի ոլորտներում,

ինչպիսիք են գյուղատնտեսությունը, կենսաբազմազանությունը, էներգետիկան, տրանսպորտը, արտակարգ իրավիճակներին արձագանքումը, հանքարդյունաբերությունը, թափոնները և կլիմայի փոփոխությունը:

Ակնկալվում է, որ երկարաժամկետ հեռանկարում Սևանա լճի ՇՄՍՏՀ-ը կնպաստի ազգային մակարդակով ՇՄՍՏՀ-ի ձևավորմանը:



Երջակա միջավայրի եվրոպական գործակալություն
Կոնգենս Նյուտորվ 6
1050 Կոպենհագեն Կ
Դանիա
+45 33 36 71 00



Zoi բնապահպանական ցանց
Chemin de Balexert 9
CH-1219 Châtelaine, Շվեյցարիա
+41 22 917 83 42



ՀՀ բնապահպանության նախարարություն
Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն
+374 11 818 506
min_ecology@mnp.am



ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն
+374 11 524 213
info@armstat.am

ԵՀԲԳ-ՇՄՍՏՀ ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը
հասանելի է <http://enpi-seis.pbe.eea.europa.eu>